Գավառի պետական համալսարանի 2016-2021 թթ. ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման 2016-2017ուսումնական տարվա գործողությունների ծրագիր

ց	Նպատակը	Գործողությունները	Պատաս խանատու ստորաբա ժանումները /պատասխանատու ները/	Ռեսուրսները		Հնարավոր խոչընդոտները	Արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցչիները
				Առկա	Պահանջվող		
Ի. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ.							
1	Մասնագիտական ամբիոնների կողմից բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի պարբերաբար վերանայում ու արդիականացում, դրանց բովանդակային և կառուցվածքային բարեփոխում ու բազմազանեցում, օտարալեզու մասնագիտական կրթական ծրագրերի մշակում և իրականացում:	**1.1** Առկա և հեռակա ուսուցման համակարգերում իրականացվող բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) կառուցվածքի վերանայում՝ համապատասխանեցնելով ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների նոր ցանկին, որակավորումներին համապատասխանող կրթական վերջնարդյունքների սահմանում, առանձին մասնագիտությունների գծով հոգեբանամանկավարժական կրթամասին, մանկավարժական պրակտիկաներին հատկացվող կրեդիտների տրման	Ուսումնագիտակա ն գծով պրոռեկտոր, ԱՔՎ, ֆակուլտետային և համալսարանակա ն մեթոդական խորհուրդներ, մասնագիտական ամբիոններ, կրթական ծրագրերի ղեկավարներ	բոլոր ՄԿԾ-ների գծով սահմանված նորմեր՝ ըստ յուրաքանչյուր կրթամասի կրեդիտների բաշխման համար մշակված մեթոդաբանություն, ՄԿԾ-ների տեղեկագրքեր	մանկավարժական կրթություն ապահովող ՀՀ առաջատար բուհերի փորձը, համապատասխան մասնագիտական ներուժը	ՀՀ ՈԱԾ-ի և ՈՈՇ-ի դեռևս նախագծային կարգավիճակը, աշխատաշուկայում մասնագետի պահանջվող իրազեկությունների ոչ հստակ նկարագրերը	վերանայված 16 ՄԿԾ-ների ուսումնական պլաններ, սահմանված վերջարդյունքներ բակալավրիատում և մագիստրատուրայում:

		մեթոդաբանության մշակում, դրանց համապատասխանեցում Որակավորումների ազգային շրջանակին, Որակավորումների ոլորտային շրջանակներին, ազգային և միջազգային հենանիշերին: **1.2** Առարկայական ծրագրերի արդիականացում՝ սահմանելով յուրաքանչյուր դասընթացի կրթական վերջնարդյունքները, դրանց հետ փոխկապակցված ուսուցման, ուսումնառության և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման մեթոդները: **1.3** Առկա ուսումնամեթոդական, կադրային ռեսուրսների ուսումնասիրում, կրթական ծրագրերի ընտրում, հետևողական աշխատանքների ծավալում՝ դրանք օտարալեզու դարձնելու, հեռահար ուսուցում կազմակերպելու ուղղությամբ:					
2	Աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրում և ուսուցանվող	**2.1** Գործատուների, դիմորդների, գործազուրկների, կանանց, արտաքին այլ շահառուների	Ուսումնագիտակա ն գծով պրոռեկտոր, ԱՔՎ, Հանրության հետ	նոր 4 կրթական ծրագրեր, դրանց իրականացման փորձ,	լրացուցիչ ֆինանսական միջոցներ, անհրաժեշտ	մարզում արտագաղթի և գործազրկության բարձր մակարդակ,	6 լրացուցիչ կրթական ծրագրեր, 2 նոր ՄԿԾ-ներ

	մասնագիտությունների նկատմամբ շուկայական պահանջարկի և սոցիալական պատվերի գնահատում, ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման առանձնահատկություններ ի հաշվառմամբ ուսուցանվող մասնագիտությունների ցանկի ճշգրտում	շրջանում կրթական կարիքների բացահայտմանը միտված հարցումների իրականացում, արդյունքների վերլուծում, լրացուցիչ կրթական մոդուլների մշակում: 3.2 Մագիստրատուրայում Դեղագործական քիմիա, Սերվիս, Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտությունների գծով կրթության կազմակերպման լիցենզիայի համար անհրաժեշտ կանոնակարգային հենքի և անհրաժեշտ այլ փաստաթղթերի պատրաստում և ներկայացում, կրթության կազմակերպման արտոնման հետագա պահանջների բավարարում:	կապերի և լրատվության բաժին, Որակի ապահովման բաժին	շարունակական կրթության կազմակերպման ծրագրեր	նյութատեխնիկական, կադրային ռեսուրսներ	հանրության շրջանում ցկյանս (շարունակական) ուսումնառության մոտիվացիայի պակաս	
3	Ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի շարունակական թարմացում, ակնկալվող մասնագիտական իրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և	**3.**1 ՄԿԾ-ների վերջնարդյունքների և ուսպլանների բոլոր մոդուլների վերջնարդյունքների համադրում, շեղումների բացահայտում, համապատասխանեցման աշխատանքների իրականացում:	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔՎ, կրթական ծրագրերի ղեկավարներ, դեկաններ	իրականացվող ՄԿԾ-ների մշակված հայեցակարգեր, տեղեկագրքեր, վերջնարդյունքներով սահմանված առարկայական ծրագրեր	վերապատրաստումների նոր ծրագրեր	-	վերջնարդյունքներով սահմանված և իրականացվող կրթական ծրագրեր

	հմտությունների հստակ սահմանում, կրթական ելքային արդյունքների համապատասխանեցում գործատուների պահանջներին:						
4	ԳՊՀ ուսանողի և դասախոսի ուղեցույցերի շարունակական բարեփոխում և ամենամյա հրապարակում, դասընթացների նկարագրերի հստակեցում և մասնագիտությունների տեղեկագրքերի վերամշակում ու արդիականացում:	**4.1** Ներքին և արտաքին շահառուների շրջանում իրականացրած հարցումների արդյունքների ամփոփում, համապատասխան հաշվետվությունների, ուղեցույցերի մշակում, հրապարակում, տարածում: **4.2** Ուսուցանվող կրթական ծրագրերի տեղեկագրքերի թարմացում, կամընտրական, պարտադիր մոդուլների նկարագրերի, գնահատման համակարգի, դրա մեթոդաբանության, շրջանավարտի հետագա կարիերայի հնարավորությունների, ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների նկարագրությունների ներառմամբ տեղեկագրքերի մշակում կամ լրամշակում,	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔՎ, դեկաններ, կրթական ծրագրերի ղեկավարներ, Որակի ապահովման բաժին, Հանրության հետ կապերի և լրատվության բաժին	69 կանոնակարգեր, ընթացակարգեր, ուղեցույցեր, 16 ՄԿԾ տեղեկագրքեր	նոր մշակումների համար անհրաժեշտ ֆինանսական, նյութատեխնիկական և կադրային ռեսուրսներ		իրականացվող բոլոր ՄԿԾ-ների թարմացված տեղեկագրքեր, դասախոսների, ուսանողների համար մշակված, բարեփոխված ուղեցույցեր, դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ծրագրեր

		տպագրում, տարածում, շնորհվող կրեդիտների մասին ուսանողների շրջանում իրազեկության ապահովում: **4.3** Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, հանրակրթական միջնակարգ և ավագ դպրոցներին ՄԿԾ-ների տեղեկագրքերի տրամադրում, պոտենցիալ դիմորդների շրջանում մասնագիտական կողմնորոշման այլ միջոցառումների իրականացում:					
5	Կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչների հետևողական կիրառում ուսումնական գործընթացում, դրանց արդյունավետության բարձրացում:	**5.1** Խորհրդատուների, կրթական ծրագրերի ղեկավարների ինստիտուտի, ուսանողի կրթական անհատական հետագծի կառուցման մշակույթի շարունակական զարգացում: **5.2** Միջմասնագիտական, ազգային, միջազգային մակարդակներում ուսանողների ակադեմիական շարժունության հնարավորությունների ընդլայնում, կրեդիտների կուտակողական գործառույթի	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔՎ, մասնագիտական ամբիոններ	ընդունված կանոնակարգեր, ընթացակարգեր, ուղեցույցներ, տարեկան մոտավորապես 14 ուսանողի, 6 դասախոսի ակադեմիական շարժունության ապահովում	անհրաժեշտ ֆինանսական, ուսումնամեթոդական ռեսուրսներ	կամընտրական առարկաների գծով սակավաթիվ խմբերի ձևավորում, նրանցում ուսումնական գործընթացների իրականացման համար ֆինանսական ռեսուրսների անբավարարություն	իրականացվող բոլոր ՄԿԾ –ներում ուսանողների անհատական հետագծի կառուցում, ակադեմիական շարժունություն ապահոված ուսանողների, դասախոսների թվի աճ

		իրականացման շարունակական զարգացում:					
6	Ուսանողների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում՝ գիտական-տեղեկատվական տարբեր շտեմարանների օգտագործման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման համար:	**6.1** «E-learning.GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի, դրանում ներառված առարկայական ծրագրերում էլեկտրոնային ռեսուրսների առկայության, դրանց հասանելիության աստիճանի մշտադիտարկում, բարելավում: **6.2** Էլեկտրոնային գրադարանի համալրում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ:	Ուսումնագիտական և վարչատնտեսական գծով պրոռեկտորներ, SS բաժին, ԱՔՎ, մասնագիտական ամբիոններ	մշակված էլեկտրոնային ուսումնամեթոդական բազա, պահանջվող գրականության ցանկ նախատեսող առարկայական ծրագրեր, E-learning.GSU համակարգում թվով 2500 առարկայական տիրույթներ	անհրաժեշտ նյութատեխնիկական, ֆինանսական, կադրային ներուժ	դասախոսների գերծանրաբեռնվածություն, արտալսարանային աշխատանքի ոչ բավարար մոտիվացիա	E-Learning էլեկտրոնային համակարգում բոլոր ՄԿԾ-ների առկայության տիրույթների քանակի աճ, վերանայված բովանդակություն
7	Սովորողների գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի կատարելագործում, ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու գնահատման նոր ձևերի և եղանակների կիրառում, համակարգչային թեստերի միջոցով <<Examination.GSU.am>> համակարգով	**7.1** Ուսանողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների գնահատման նոր մեթոդաբանության մշակում՝ գիտելիք, կարողություն, հմտություն իրազեկությունների գնահատման տեսանկյունից:	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔՎ, դեկանատներ	բազմագործոն գնահատման գործող կանոնակարգ, մշակված ձևաչափեր, կուտակած փորձ	վերապատրաստումների ծրագրեր	սովորողների կարողությունների և հմտությունների գնահատման մեթոդաբանության և փորձի բացակայություն	մշակված և հաստատված նոր մեթոդաբանություն, համապատասխան կանոնակարգ

	սովորողների գնահատում:						
8	Կրթության որակի մշտադիտարկում, ուսումնական գործընթացի կազմակերպման ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, ինքնավերլուծության և ինքնագնահատման պարբերաբար իրականացում, անհրաժեշտ միջոցների ձեռնարկում՝ կրթության որակի ապահովման և Համալսարանի ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման նպատակներով:	**8.1** Ներքին և արտաքին շահառուների հետ հետադարձ կապի ապահովման նոր կառուցակարգերի մշակում և ներդնում, այդ գործում ուսանողական ինքնակառավարման մարմինների ներգրավում: **8.2** Համալսարանի ամենամյա ինքնավերլուծության անցկացման աշխատանքային խմբերի կարողությունների շարունակական զարգացման ծրագրերի մշակում և գործարկում, ենթակառուցվածքային հավատարմագրման նախապատրաստական աշխատանքների իրականացում, հավատարմագրման պահանջների կատարում:	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔՎ, որակի ապահովման բաժին, դեկանատներ	իրականացված SWOT վերլուծություններ, ինքնավերլուծության զեկույց	ֆինանսական լրացուցիչ միջոցներ	արտաքին գնահատման փորձի բացակայություն	բուհի ենթակառուցվածքային, ծրագրային հավատարմագրում
9	ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի կողմից ուսանողների և շրջանավարտների	**9.1** Դասախոսական կազմի գործունեության գնահատման բազմագործոն համակարգի մշակում և գործարկում, նրանց վարկանիշային գնահատման	Գիտխորհուրդ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔՎ, մասնագիտական ամբիոններ,	ԵՄ 16 ծրագրերի իրականացում, կուտակված փորձ, համապատասխան պայմանագրեր, Որակի	նոր միջազգային դրամաշնորհային ծրագրեր:	Հանրապետությունում դասախոսական կազմի վարկանիշային համակարգի	դասախոսական կազմի գործունեության գնահատման վարկանիշային համակարգ

	շրջանում կրթության որակից բավարարվածության բացահայտման հարցումների պարբերաբար անցկացում, ուսուցման և ուսումնառության որակի համալիր ուսումնասիրություն, ներքին ստուգումների անցկացում, կրթական ծրագրերի իրականացման ընթացքի, դասընթացների կազմակերպման մեկնարկային հնարավորությունների, դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների, ուսանողների գիտելիքների որակի բարելավման կառուցակարգերի մշակում և ներդրում:	համակարգում հրատարակած գիտական աշխատանքների հաշվառում, բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում դասախոսների հրապարակումների խրախուսում:	դեկանատներ	ապահովման ներքուհական համակարգ, համապատասխան կանոնակարգային հենք		կիրառման մշակույթի բացակայություն	
10	Մագիստրոսական կրթական աստիճանում առաջատար մասնագետների ներգրավվածության աճ, մագիստրոսների հետազոտական	10.1 ՈՒԳԸ աշխատանքների ակտիվացում, հետազոտական ծրագրերում ընդգրկված ուսանողներին և դասախոսներին խրախուսման	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՈԻԽԸ, ՈԻԳԸ, դեկանատներ	ՈԻԳԸ աշխատանքային կանոնակարգ, հետազոտական աշխատանքներին տրամադրվող միջոցներ	գիտահետազոտության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ	հետազոտական աշխատանքներում ներգրավվածության ցածր մոտիվացիա	հետազոտական ծրագրերի քանակ

	աշխատանքների կիրառական ուղղվածության ապահովում:	կառուցակարգերի մշակում և գործարկում:					
11	Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխանող չափանիշներով կրթական երրորդ աստիճանի ներդրում, ասպիրանտական կրթական ծրագրերի աստիճանական իրականացման համար անհրաժեշտ իրավական, փաստաթղթային, կադրային, նյութատեխնիկական և այլ բազայի ստեղծում	**11.1** ԳՊՀ-ում ասպիրանտական գիտակրթական ծրագրի իրականացման, որակի ապահովման, աստիճանաշնորհման կարգերի, ընթացակարգերի, ասպիրանտների և գիտական ղեկավարների հաշվետվողականության համակարգի մշակում: **10.2** «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» ասպիրանտական ծրագրում ընդունելության համար անհրաժեշտ ընթացակարգի, փաստաթղթերի մշակում, տեղեկատվության տարածում հնարավոր շահառուների շրջանում, ընդունելության կազմակերպում, կրթական և հետազոտական բաղադրիչներին կրեդիտների հատկացման մեթոդաբանության, ասպիրանտական կրթության ուսումնական պլանի մշակում:	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, կառավարման և ֆինանսների ամբիոն	ասպիրանտուրայի բացման թույլտվություն, պրոֆեսորադասախոսական կազմ	անհրաժեշտ ուսումնամեթոդական, ֆինանսական միջոցներ	նախկինում բարձրագույն կրթության երրորդ աստիճանում կրթության կազմակերպման փորձի բացակայություն	ասպիրանտուրա՝ ֆինանսներ, հաշվապահական հաշվառում մասնագիտության գծով

11	ԳՊՀ ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում՝ ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և արտաքին միջավայրի պահանջների հաշվառմամբ:	**11.1** Ամբիոնների հետազոտական գործունեության, ծրագրերի մշակում, գիտական ուղղությունների ամրագրում, հետազոտական աշխատանքների տարեկան հաշվետվությունների հրապարակում: 26.2 ԳՊՀ ամենամյա 19-րդ գիտաժողովի կազմակերպում և իրականացում՝ նվիրելով ԳՊՀ պատվավոր բարերար Ժիրայր Նիշանյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին:	Ուսումնագիտակա ն գծով պռորեկտոր, ԱՔՎ, մասնագիտական ամբիոններ	ամբիոնների հետազոտական հաստատված ուղղություններ, ամենամյա գիտաժողովների անցկացում	նոր հետազոտական նախագծեր, դրամաշնորհային ծրագրեր	ոչ բավարար ֆինանսական միջոցներ	այլ աղբյուրներից ֆինանսավորվող գիտական հետազոտական ծրագրերի քանակ, դրանցում ներգրավված դասախոսների և ուսանողների թիվ
12	Միջբուհական գիտական ծրագրերի, համատեղ հետազոտությունների իրականացման նպատակով ֆինանսավորման աղբյուրների որոնում, դրամաշնորհային ծրագրերի ընձեռած հնարավորությունների օգտագործում:	**12.1** Միջազգային և հանրապետական հետազոտական դրամաշնորհային ծրագրերին ակտիվ մասնակցության ապահովում: **12.2** Հետազոտական ծրագրերում գործարար համայնքի ներգրավում, ներդրումների ապահովում և դրանց նպատակային օգտագործում:	Ուսումնագիտակա ն գծով պրոռեկտոր, ԱՔՎ, մասնագիտական ամբիոններ	Ուսումնական լաբորատորիա, պրոֆեսորադասա խոսական բարձրորակ անձնակազմ	հետազոտական ծրագրերի իրականացման նպատակով համագործակցայի ն կապեր	հետազոտության մեջ գործատու համայնքի ներդրումային ծրագրերի բացակայություն	հետազոտական դրամաշնորհային ծրագրերի և նրանցում մասնակցող դասախոսների թիվ
II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.							

2	Համալսարանի գործունեությունը կարգավորող ներբուհական փաստաթղթերի և համապատասխան օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության և գիտության նախարարության գերատեսչական և այլ ակտերի համապատասխանության ապահովում:	2.1 Համալսարանի կանոնակարգային բազայի շարունակական արդիականացում, համապատասխանեցում ոլորտի պետական, գերատեսչական ակտերին, գործող կանոնակարգերի, ընթացակարգերի բարելավում: Կանոնակարգման ենթակա ոլորտների համար անհրաժեշտ նոր ընթացակարգերի մշակում և գործարկում:	ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկանատներ, կառուցվածքային այլ ստորաբաժանումներ	համալսարանում մշակված և հաստատված 69 կանոնակարգեր	առկա ներբուհական ակտեր	նոր ակտերի մշակման համար անհրաժեշտ ռեսուրսների պակաս	նոր մշակված կամ բարելավված կանոնակարգերի քանակ
III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.							
1	Ուսանողների շրջանում գիտելիքների արժևորում, ուսման նկատմամբ գիտակից և պատասխանատու վերաբերմունքի ձևավորում, կրթամակարդակի գնահատում՝ որպես բարձր կենսամակարդակի ապահովման, սոցիալական կարգավիճակի ձեռքբերման և կյանքի որակի երաշխավորման անհրաժեշտ գործոն:	1.1 Համալսարանի կառավարման գործում, որոշումների կայացման մեջ ուսանողական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացում:	ՈՒսումնագիտական գծով պրոռեկտոր, Կադրերի և հատուկ բաժին, ՈՒԽ, ՈՒԳԸ	խորհրդատուների գործունեության կանոնակարգի առկայություն	խորհրդատուների աշխատանքի կուտակված փորձ	խորհրդատուների ինստիտուտի մշակույթի ոչ բավարար մակարդակ	խորհրդատուների աշխատանքային նկարագրերի թիվ
IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ.							
1	Համալսարանի	**1.1**	Ուսումնագիտակա	Բոլոր	կուտակված փորձ	Էլեկտրոնային	Պաշտոնի

	կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, վարչարարության միջոցների ու մեթոդների բարելավում, ճկուն կառուցակարգերի և գործիքների կիրառում:	Վարչարարության նոր գործիքների մշակում և ներդնում, թափանցիկություն և օպերատիվություն ապահովող մեթոդների կառավարում, «էլեկտրոնային դեկանատ» համակարգի նախագծում և ներդրում:	ն գծով պրոռեկտոր, ԱՔՎ, դեկանատներ, Կադրերի և հատուկ բաժին, Հանրության հետ կապերի և լրատվության բաժ ին	կառուցվածքային ստորաբաժանումն երի գործունեության կանոնակարգեր		ռեսուրսների անվտանգության համակարգի անհուսալիություն	նկարագրեր, անձնագրեր X քանակի
2	Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների ու պատասխանատվության ճիշտ բաշխում, գործունեության հստակ ուղղորդում, ներդաշնակ և համագործակցված աշխատանքի ապահովում:	2.1 Բուհի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերի, գործառույթների վերանայում, դրանք համապատասխանեցնելով բուհի ռազմավարական նպատակների իրականացմանը, «ԳՊՀ հիմնադրամի կանոնադրությանը»:	Ռեկտոր, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Կադրերի և հատուկ բաժին	Կառուցվածքային ստորաբաժանումն երի կանոնադրությունն երի առկայություն	Մեթոդական գրականություն	Փոփոխությունների նկատմամբ անձնակազմի ոչ դրական մոտեցում	Մշակված կամ լրամշակված կանոնակարգերի, անձնակազմի պաշտոնների նկարագրերի քանակ
3	Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվության մեխանիզմների կատարելագործում և գործունեության արդյունքների գնահատման նոր մեթոդների ու գործիքների կիրառում:	**3.1** Համալսարանական գործունեության բոլոր ուղղություններով գործընթացների արդյունավետության գնահատման ցուցիչների սահմանում, դրանց հասանելիության աստիճանի մշտադիտարկում:	Գիտխորհուրդ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔՎ, կառուցվածքային ստորաբաժանումն երի ղեկավարներ	ամենամյա հաշվետվողականո ության համակարգ	մեթոդական գրականություն	ոչ բոլոր ոլորտներում արդյունավետությա ն ցուցիչների թվային սահմանման հնարավորություն	համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում սահմանված արդյունավետության ցուցիչներ, հաշվետվողականութ յան նոր համակարգ
V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ.							

1	Համալսարանի ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում, ֆինանսական կայունության ապահովում՝ ֆինանսական հոսքերի ճշգրիտ պլանավորման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով:	**1.1** Պետական ֆինասավորման հնարավորությունների ընդլայնում, ֆինանսավորվող գիտակրթական ծրագրերի մշակում և իրականացում, ֆինանսական ռիսկերի մշտական կանխատեսում և դրանց մեղմման պլանավորում:	Ռեկտոր, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, գլխավար հաշվապահ	ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականություն	նոր համագործակցային ծրագրեր	պետբյուջեից և այլ աղբյուրներից սակավ ֆինասնավորում	պետության կողմից ֆինանսավորվող գիտակրթական ծրագրերի քանակ
VI. **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.**							
1	Համագործակցություն Հայաստանի Հանրապետության և զարգացած պետությունների առաջատար բուհերի, այլ կրթական, գիտական հաստատությունների, դաստիարակչական, մշակութային ուղղվածության կազմակերպությունների հետ:	**1.1** Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի կանոնակարգի վերանայում՝ ներառելով արտաքին կապերի ընդլայման գործառույթներ:	Ռեկտոր, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ	հաստատված պայմանագրեր առաջատար բուհերի հետ	նոր դրամաշնորհային ծրագրեր, համագործակցային կապեր	ոլորտում փորձառու մարդկային ռեսուրսների անբավարարություն	հաստատված նոր համագործակցային հուշագրերի, պայմանագրերի քանակ
2	Համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի գործունեության ուսումնասիրություն, արդյունքների վերլուծություն, համադրում	**2.1** Կրթության միջազգայնացման նպատակով համացանցային հարթակի մշակում, համալսարանի գործունեության բոլոր ոլորտների	ուսումնագիտական գծով պրոռեկտոր, վարչատնտեսական գծով պրոռեկտոր, ԱՔՎ, Որակի	«ԳՊՀ-ի կողմից առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման (բենչմարքինգի)»	ԵՄ նոր դրամաշնորհային ծրագրեր	ոլորտում փորձառու մասնագետների պակաս, լեզվական խոչընդոտներ	համադրական վերլուծության իրականացմանն ուղղված և տեղայնացված ծրագրերի քանակ

	և առաջավոր փորձի կիրառում («բենչմարքինգի» իրականացում), Համալսարանի ինտեգրում եվրոպական գիտակրթական տարածք, կրթության միջազգայնացում:	միջազգայնացման կարևորում:	ապահովման բաժնի միջազգային գծով մասնագետ, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին	ընթացակարգ, ավելի քան 84 եվրոպական բուհերի հետ համագործակցայի ն կապեր			
3	Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ակտիվացում, քոլեջների և ուսումնարանների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ կրթության շարունակական կազմակերպում Համալսարանում:	**3.1** Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության հուշագրերի մշակում, ուժը կորցրած պայմանագրերի վերահաստատում:	ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔՎ	շարունակական կրթական ծրագրերի իրականացման համար թվով 22 պայմանագրեր	-	-	շարունակական կրթական ծրագրով ուսումնառողների քանակի աճ, կնքված նոր պայմանագրերի քանակ
4	ՀՀ Գեղարքունիքի մարզի շահառուներին կրթական ծառայությունների մատուցման կենտրոնի ձևավորում, ԳՊՀ գրադարանի, տեղեկատվական, տեխնիկական և այլ առկա ռեսուրսների օգտագործում:	**4.1** Համալսարանը՝ մարզում որպես գերազանցության կենտրոնի հռչակում, հանրությանը մատուցվող ծառայությունների բազմազանեցում: **4.2** Հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում հետադարձ կապի մշտադիտարկման գործուն համակարգի մշակում և ներդնում, հանրակրթական և	Ուսումնագիտակա ն գծով պրոռեկտոր, ԱՔՎ, Հանրության հետ կապերի և լրատվության բաժին	գրադարաններ, գրքային ֆոնդ, ուսումնական լաբորատորիաներ, համակարգչային լսարաններ	նորորոկան տեխնոլոգիաներ	անբավարար ֆինանսական միջոցներ	կոորպորատիվ պատասխանատվութ յան հայեցակարգ, իրականացվող ծրագրերի և դրանցում մասնակիցների քանակ

		ավագ դպրոցների մեթոդական կարիքների ուսումնասիրում, դրանց բավարարման համար ծրագրերի մշակում:					
VII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.							
1	Համալսարանի ներքին շահառուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, գործընկերների հետ արդյունավետ համագործակցության ապահովում, բուհի նկատմամբ հանրային վստահության, Համալսարանի բարի համբավի ամրապնդում: Համալսարանի 2016-2021 թվականների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների իրականացում, կոռուպցիայի բոլոր դրսևորումների բացառում, բարեվարքության կանոնների պահպանում ու տարածում:	**1.1** ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի դրույթների հետևողական իրականացում, բարեվարքության կանոնների մշակում:	Գիտխորհուրդ, ռեկտոր, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔՎ	Ակադեմիական ազնվության հայեցակարգ	կուտակված հակակոռուպցիոն փորձ	Կոռուպցիոն վտանգներ	Մշակված և ընդունված բարեվարքության կանոններ